

Արձանագրություն N 8

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2016թ. դեկտեմբերի 2-ի արտահերթ նիստի
(ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5)

Ներկա էին՝

խորհրդի նիստը վարեց՝ Պավել Սաֆարյանը:

խորհրդի անդամներ՝ Պավել Սաֆարյանը, Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Սահակյանը, Մելիտա Հակոբյանը, Կարեն Միրզաբեկյանը, և Աբգար Մկրտչյանը:

Մասնակցում էին՝ Լևոն Իսախանյանը, Տարոն Հակոբյանը, Ալիսա Երանոսյանը, Արարատ Սարգսյանը, Արմեն Տերտերյանը և Վոլոդյա Թամրազյանը:

Քարտուղար՝ Արծրուն Նաջարյան:

Օրակարգ

Լսեցին՝

1. Տեսչական մարմնի 2017թ. ստուգումների ծրագրի հաստատում:

Զեկուցող՝ Լևոն Իսախանյան

Արտահայտվեցին՝ Պ. Սաֆարյանը, Հ. Այվազյանը, Ա.Սեդրակյանը, Կ.Միրզաբեկյանը, Մ. Հակոբյանը:

Որոշվեց՝ Հաստատել տեսչական մարմնի 2017 թվականի ստուգումների ծրագիրը ըստ ներկայացված ցանկի:

Կողմ – 8:

Դեմ – 0:

Լսեցին՝

2. Կառավարման խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում տեսչական մարմնի կողմից իրականացված աշխատանքների հաշվետվություն.

Զեկուցող՝ Լևոն Իսախանյան

Արտահայտվեցին՝ Պ. Սաֆարյանը, Հ.Այվազյանը, Կ.Իսախանյանը, Կ.Միրզաբեկյանը, Կ. Սահակյանը:

Առաջարկվեց՝ հաշվետվությունն ընդունել ի գիտություն: Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը հրավիրել խորհրդի նիստ, 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնի 2017 թվականի աշխատանքային ծրագիրը՝ եռամսյակային կտրվածքով՝ էլեկտրոնային տարբերակով շրջանառելու, քննարկելու և հաստատելու համար:

Որոշվեց՝ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ – 8:

Դեմ – 0:

